

ՎԱՐԱՋՐԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ծննդյան 95-ամյակի առթիվ)



Հայաստանի՝ երեք հազարամյակից էլ ավելի ժամանակաշրջանում ստեղծված և ձևավորված ճարտարապետությունը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի ամենակարևոր ու արժեքավոր բնագավառներից է: Հայրենի ճարտարապետության կազմավորման և զարգացման ուսումնասիրության ազգանվեր ու շնորհակալ գործում իր խոշոր ավանդն ունի 95 տարին բոլորած ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Վարագդատ Մարտիրոսի Հարությունյանը:

Նա ծնվել է Վան քաղաքում և իր հազարավոր բախտակից հայրենակիցների հետ բռնել գաղթի ճանապարհը, ապա հաստատվել Թբիլիսիում: Այստեղ ապագա գիտնականն ավարտել է միջնակարգ դպրոցը, հետո Երևանում ընդունվել Պոլիտեխնիկական ինստիտուտ, որը 1937 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է և ստացել ճարտարապետի կոչում: Նույն ինստիտուտում Վ. Հարությունյանը 1938 թ. սկսել է իր մանկավարժական աշխատանքը, որը շարունակել է վեց տասնամյակ՝ ընդհատելով միայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին բանակ գորակոչվելու պատճառով:

Դեռ ուսանողական տարիներին դրսևորվել են Վ. Հարությունյանի հետաքրքրությունները հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձանների նկատմամբ: Դա 1939 թ. նրան բերեց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի ասպիրանտուրա: Վ. Հարությունյանը 1946 թ. պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ «Դվինի ճարտարապետական հուշարձանները» թեմայով, որը 1950 թ. հրատարակվեց առանձին գրքով:

Վ. Հարությունյանը, 1945 թ. սկսած, գիտահետազոտական և մանկավարժական գործունեությունը զուգակցել է ճարտարապետական հաստատություններում ղեկավար աշխատանքի հետ: 1945–1951 թթ. նա գլխավորել է Հուշարձանների պահպանության կոմիտեն՝ միաժամանակ լինելով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի ճարտարապետական գործերի վարչության պետի տեղակալ: Այս աշխատանքները նրան հնարավորություն տվեցին հանգամանորեն ծանոթանալու Հայաստանի ճարտարապետական հուշարձաններին, ինչպես նաև հանրապետությունում նախագծման և շինարարության հարցերին: Վ. Հարությունյանի գործունեությանը պետք է վերագրել Հայաստանում հուշարձանների պահպանության ու վերականգնման, ինչպես նաև հաշվառման գործի գիտական կազմակերպման սկզբնավորումը:

Վ. Հարությունյանը մոտ կես դար եղել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչը: Նա առաջինն է մշակել հայկական ճարտարապետության պատմության և տեսության դասընթացների հիմունքները, մտցրել Հայաստանում խիստ անհրաժեշտ՝ հուշարձանների վերանորոգման և վերականգնման գործի դասավանդումը՝ համապատասխան մասնագետներ պատրաստելով բացօթյա թանգարան մեր երկրի համար: 1951–1953 թթ., համատեղության կարգով, Վ. Հարությունյանը ՀԽՍՀ Գիտությունների

ակադեմիայի Արվեստի պատմության ու տեսության բաժնի տնօրենն էր՝ իր նպաստը բերելով հայ արվեստաբանության զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի հենց սկզբից գիտնականն իրեն դրսևորեց ոչ միայն որպես հայկական ճարտարապետության գիտակ, այլև, որը շատ կարևոր է, իսկական հայրենասեր: Նրա՝ «Արուճի տաճարի թվագրման առթիվ» 1946 թ. ռուսերեն տպագրված աշխատանքը պատասխան էր Գ. Չուբինաշվիլու՝ հայկական մշակույթի հանդեպ կատարած ոտնձգություններին, որի համար այդ տարիներին քաղաքացիական խիզախություն էր պահանջվում:

Փորձ կուտակելով Հայաստանի ճարտարապետության քիչ ուսումնասիրված առանձին խնդիրների հետազոտության ասպարեզում՝ Վ. Հարությունյանը 1950 թ. Մոսկվայում (Ս. Սաֆարյանի հետ համատեղ) հրատարակեց «Հայկական ճարտարապետության հուշարձանները» գիրքը՝ հարուստ պատկերազարդումներով և շարադրված գիտական բարձր մակարդակով:

Վ. Հարությունյանի գիտահետազոտական աշխատանքում արժեքավորն այն է, որ նա ուշադրություն է դարձնում հայկական ճարտարապետության չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված հարցերին: Այնպիսի թեմաներ, ինչպիսիք են միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունն ու աշխարհիկ ճարտարապետությունը, դարձան նրա երկարատև հետազոտությունների հիմնական բնագավառները, որոնց արդյունքները հեղինակը տպագրեց առանձին գրքերով և հոդվածներով: Այդ մենագրություններից «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները» գիրքը լուրջ ներդրում եղավ հայկական աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրության գործում:

Վ. Հարությունյանի, որպես գիտնականի, նշելի գծերից է նաև այն, որ նա, հիմնականում զբաղվելով Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության խնդիրներով, իր այդ աշխատանքն արդյունավետ զուգակցում է նաև հայկական ժամանակակից ճարտարապետության հարցերի հետազոտությանը: Դրան են նվիրված Վ. Հարությունյանի հարյուրավոր հոդվածները, տպագրված զեկուցումները: XX դ. առաջին կեսի հայկական ճարտարապետությանն է վերաբերում նրա՝ «Մովետական Հայաստանի ճարտարապետությունը» մենագրությունը՝ տպագրված 1955 թ., ռուսերեն, Կ. Հովհաննիսյանի հեղինակակցությամբ: Այս գիրքը Խորհրդային Հայաստանի ճարտարապետության կազմավորման ու զարգացման պատմական գործընթացի գիտական համակարգման առաջին փորձն էր:

Վ. Հարությունյանի՝ 1960-ական թթ. հետազոտությունների շարքում ամենանըշանակալիցը «Քաղաքաշինությունը հին և միջնադարյան Հայաստանում» խոշոր մենագրությունն էր, որը հեղինակը 1964 թ. Լենինգրադում հաջողությամբ պաշտպանեց որպես ատենախոսություն և ստացավ ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան: Այս աշխատության հետ է առնչվում նույն թվականին տպագրված «Անի քաղաքը» գիրքը՝ նվիրված Հայաստանի երբեմնի մայրաքաղաքին: Իսկ այսօրվա մայրաքաղաքին էր նվիրված 1968 թ. Մոսկվայում լույս տեսած «Երևան» գիրքը (Ս. Հասրաթյանի և Ա. Մելիքյանի հեղինակակցությամբ), որում առաջին անգամ ներկայացվում էր Երևանի ճարտարապետությունը՝ քաղաքի հիմնադրումից մինչև նրա 2750-ամյա հոբելյանը:

Մփյուռքի հայությանը և ընդհանրապես արտասահմանյան ընթերցողին

Հայաստանի ճարտարապետական ժառանգությանը ծանոթացնելու գործում խիստ կարևոր էր 1975 թ. Մեծ Եղեռնի 60-ամյակին, Վ. Հարությունյանի՝ Բեյրութում լույս տեսած «Հայաստանի հուշարձանները» (Մորուս Հասարայանի մասնակցությամբ) շքեղ պատկերագրող գիրքը՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:

1978 թ. Վ. Հարությունյանը հրատարակեց «Հին աշխարհի ճարտարապետությունը» ուսումնական ձեռնարկը՝ հիմնականում գրված արտասահմանյան ուղևորությունների ժամանակ կատարած սեփական դիտարկումների հիման վրա: 1988 թ. նա տպագրեց «Եկայք շինեսցուք» գիրքը՝ նվիրված Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեությանը:

Վ. Հարությունյանի գրչին են պատկանում մի շարք հանրամատչելի գրքույկներ՝ նվիրված հայկական ճարտարապետական ժառանգության պահպանմանը, Թ. Թորամանյանին, Էջմիածնի հուշարձաններին, Զվարթնոցին և այլն: Նա ակտիվորեն և՛ որպես հեղինակ, և՛ որպես խմբագրական խորհրդի անդամ մասնակցում է հանրագիտարանների, Հայաստանի պատմությանը և ճարտարապետությանը նվիրված ակադեմիական բազմահատորյակների կազմմանը:

Վ. Հարությունյանի կեսդարյա ուսումնասիրությունների հանրագումարը եղավ 1992 թ. տպագրված «Հայաստանի ճարտարապետության պատմությունը» կոթողային մենագրությունը (գրքի ռուսերեն համառոտ տարբերակը՝ «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը» խորագրով, հրատարակվել էր 1985 թ.): Այս հիմնարար աշխատանքում տրված է Հայաստանի շինարարական արվեստի ստեղծման, կազմավորման և զարգացման փուլերի ողջ պատկերը: Գրքի իմացաբանական արժեքը կրկնապատկվում է հարուստ փաստագրական նյութերով, գիտական և միաժամանակ մատչելի շարադրանքով. այն հաստատվել է որպես դասագիրք՝ ճարտարապետության մասնագետ ուսանողների համար:

Վ. Հարությունյանը մեծ ավանդ ունի ճարտարապետության տեսական խնդիրների ուսումնասիրման գործում. մի բնագավառ, որով շատ քչերն են զբաղվել: Նրա՝ «Ժառանգությունը միջնադարյան հայկական ճարտարապետության մեջ» թեմային նվիրված ուսումնասիրությունները այդ բարդ և այժմեական հիմնահարցին նվիրված լավագույն հետազոտություններն են:

Ուշագրավ է, որ վերջին տարիներին, երբ զգալի նվազել է հայագիտական աշխատությունների հրատարակությունը, Վ. Հարությունյանը կրկնապատկված եռանդով ու երիտասարդական ավյունով մեկը մյուսի հետևից լույս է ընծայում ինչպես գիտական ուսումնասիրություններ (օրինակ՝ «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները»), այնպես էլ Հայաստանի վերջին կեսդարյա մշակութային կյանքի տարեգրությունը հանդիսացող իր հուշագրությունները, ուղեգրությունները: 1991 թ. Նրան բախտ վիճակվեց լինել իր ծննդավայր Վանում և տեղում ուսումնասիրել հայկական ճարտարապետության գլուխգործոցներ Աղթամարի տաճարը, Անիի

հուշարձանները, Կարսի եկեղեցին, Վարազավանքը: Այդ դիտարկումները հրատարակվեցին «Նախնեաց ոտնահետքերը» գրքում: Առանձնապես արգասավոր է Վ. Հարությունյանի գիտական գործունեության վերջին տասը տարին, որի ընթացքում նա գրեց և հրատարակեց 15 գիրք: Դրանց շարքում պետք է հատկապես նշել «Արվեստակից ժամանակակիցներս» (Երևան, 2001) գիրքը՝ նվիրված XX դարի հայ ճարտարապետներին, և մեծածավալ «Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության և պատմության հիմնախնդիրները» խորագրով ժողովածուն (Երևան, 2004), որն իր հանրագիտարանային բնույթի գիտական լուրջ արժեքի շնորհիվ, հիրավի, սեղանի գիրք է հայ արվեստով և ճարտարապետությամբ հետաքրքրվող յուրաքանչյուրի համար:

Վ. Հարությունյանը գիտահետազոտական և մանկավարժական բազմամյա գործունեությունը զուգակցում է հասարակական ակտիվ աշխատանքին: Նշանակալից է նրա ավանդը Հայաստանի ճարտարապետների միությունում 1960-ական թվականներին: Նա չորս անգամ անընդմեջ ընտրվել է այդ միության վարչության նախագահ: Վ. Հարությունյանը Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության կամավոր ընկերության կազմակերպիչներից է ու 1977 թվականից մինչև օրս՝ դրա հանրապետական խորհրդի նախագահը:

Վ. Հարությունյանը եղել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի վերանորոգչական և շինարարական աշխատանքների անմիջական մասնակիցն ու գիտական խորհրդատուն: Նա Մայր Աթոռին կից ճարտարապետական հանձնաժողովի երկարատև անդամն է, իսկ 1971 թվականից՝ այդ հանձնաժողովի նախագահը:

1979 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիան Վ. Հարությունյանին շնորհեց Թ. Թորամանյանի անվան մրցանակ՝ «Հայաստանի ճարտարապետությանը և տեսությանը նվիրված գիտահետազոտական նոր և մեծարժեք աշխատությունների համար»: Բեղմնավոր գիտական և հասարակական աշխատանքին ի տրիտուր՝ Վ. Հարությունյանը պարզևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, արժանացել Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Գարեգին Ա կաթողիկոսը հայ ազգին մատուցած մեծ ծառայությունների համար նրան պարգևատրել է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Հայագիտության ասպարեզում ունեցած մեծ ավանդի ու բեղմնավոր աշխատանքի համար 1996 թ. Վ. Հարությունյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Այսօր էլ հայկական ճարտարապետության պատմության ու տեսության դասական Վարազդատ Հարությունյանը եռանդով շարունակում է իր գիտական ու հասարակական արդյունավետ գործունեությունը, որից այնքան շատ ակնկալիքներ ունենք:

**ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ. Մ.
Ճարտարապետության դոկտոր**